ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սիլվա Ռուբենի Խաչիկյանի «Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում (քաղաքագիտական վերլուծություն)» ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման բավականին արդիական է և կարևոր Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման ոլորտի շուրջ քաղաքագիտական հետազոտություն իրականացնելու տեսանկյունից: Հայկական «խաղաղ ատոմի» զարգացման փորձի քաղաքագիտական վերլուծությունը միջազգային անվտանգային գործընթացների համատեքստում ունի կարևոր տեսակիրառական նշանակություն՝ հաշվի առնելով այդ ոլորտում առկա արդի մարտահրավերները: Ի վերջո, նոր աշխարհաքաղաքական փոփոխությունները ի հայտ են բերում նույնիսկ տնտեսապես զարգացած երկրների էներգետիկ անվտանգության խոցելիությունը, որը նաև դառնում է պատճառ նրանց քաղաքական և տնտեսական լծակների թուլացման: Ուստի կարևորվում է ազգային էներգետիկ համակարգերի կայուն զարգացմանը նպաստող ոլորտների զարգացման խթանումը պետական մակարդակով:

Ավելին, միջուկային զենքի չտարածման, միջուկային անվտանգության, «խաղաղ ատոմի» զարգացման հիմնախնդիրները հանդիսանում են քաղաքագիտական հետազոտությունների կարևոր թեմա: Այս առումով միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում հայկական «խաղաղ ատոմի» զարգացման փորձի ուսումնասիրությունը առանձնահատուկ նշանակություն ունի Հայաստանի համար նոր անվտանգային մարտահրավերների համատեքստում:

Ատենախոսի կողմից արդարացիորեն նշվում է «խաղաղ ատոմի» զարգացման ռազմավարական նշանակությունը Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից, որն առավել էական է դառնում տարածաշրջանում «խաղաղ ատոմի» դինամիկ զարգացման, ինչպես նաև միջազգային քաղաքական և անվտանգային գործընթացների արմատական փոփոխությունների

պայմաններում: Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ առաջնային կարևորություն է ստանում ՀՀ-ում «խաղաղ ատոմի» զարգացման քաղաքական հիմնախնդիրների ուսումնասիրությունը, վերջինիս աշխարհաքաղաքական նշանակության և զարգացման հեռանկարների ուրվագծումը՝ Հարավային Կովկասում տեղի ունեցող քաղաքական գործընթացների և միջուկային էներգետիկայի զարգացման հեռանկարների և ինտեգրացիոն գործընթացների համատեքստում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի ատոմային էներգետիկան բախվում է քաղաքական բնույթի բազմաթիվ խնդիրների և մարտահրավերների հետ, որոնց ուսումնասիրությունը և լուծման հնարավոր եղանակների վերհանումը դառնում է հրամայական այս թեմայով քաղաքագիտական վերլուծություն իրականացնելու համար: Կարևորվում է նաև ատենախոսությունում ատոմային էներգետիկայի դերի, առավելությունների և ներուժի գնահատումը էներգետիկ համակարգերի կայուն զարգացման գործում, որն ունի կիրառական նշանակություն միջազգային էներգետիկ օրակարգի և ազգային էներգետիկ քաղաքականության ձևավորման համար:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, մեթոդական հիմքը, ինչպես նաև ատենախոսության գիտական նորույթը:

Ատենախոսության «Միջուկային գործոնը ժամանակակից միջազգային անվտանգության համակարգում» վերտառմամբ առաջին գլխի չորս ենթագլուխներում ներկայացվել են «խաղաղ ատոմի» զարգացման քաղաքական ասպեկտները միջազգային անվտանգության ապահովման և էներգետիկ համակարգերի կայուն զարգացման գործընթացների համատեքստում և ատոմային էներգիայի դերը միջազգային անվտանգության համակարգում: Առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացվում են միջուկային քաղաքականության հիմնական մոդելները՝ ատոմային էներգետիկայի վերաբերյալ ոչ միանշանակ հասարակական կարծիքի ձևավորման պայմաններում: Վերջին ենթագլխում ատենախոսը անդրադառնում է ատոմային էներգետիկայի զարգացման կարևոր հիմնախնդրի՝ ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի կառավարման քաղաքական ասպեկտների

ուսումնասիրությունը: Ընդհանուր առմամբ, առաջին գլխում վերլուծության են ենթարկվել «խաղաղ ատոմի» զարգացման միջազգային փորձի քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ ասպեկտները, որ թույլ է տվել հաջորդ գլուխներում համեմատական մեթոդի կիրառմամբ արտացոլել ատոմային էներգետիկայի զարգացման հայկական փորձի առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման մարտահրավերների համատեքստում» գլխում ատենախոսը ներկայացրել է Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման նշանակությունը երկրի ազգային և էներգետիկ անվտանգության ապահովման համատեքստում: Առանձնակի ուշադրություն է դարձվել ՀՀ-ի՝ «խաղաղ ատոմի» զարգացման ոլորտում պետական քաղաքականության առանձնահատկություններին՝ ուսումնասիրելով ՀՀ օրենսդրական դաշտը, միջազգային և երկկողմ համաձայնագրերը: Վերջին ենթագլխում դիտարկվել է ատոմային էներգետիկայի դերը Հայաստանի էներգետիկ համակարգի զարգացման հիմնական միտումների համատեքստում:

Ատենախոսության երրորդ՝ «Հայկական «խաղաղ ատոմը» տարածաշրջանային և միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում» գլխում ներկայացված են Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման աշխարհաքաղաքական ասպեկտները, ներառյալ տարածաշրջանային և միջազգային անվտանգության ապահովման համար առկա մարտահրավերները, տարածաշրջանում էներգետիկ համակարգի զարգացման միտումները և ատոմային էներգետիկայի զարգացման հեռանկարները ինտեգրացիոն գործընթացների համատեքստում: Հատուկ ուշադրություն է դարձվել հայկական «խաղաղ ատոմի» զարգացման հիմնախնդիրներին՝ տարածաշրջանային և գլոբալ քաղաքական դերակատարների շահերի համատեքստում:

Արդյունքում կարելի է արձանագրել, որ ատենախոսությունում համակողմանի ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել հետազոտության նպատակից բխող խնդիրները: Եզրակացությունում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ հանդիսանալով դրա հիմնական դրույթների արտացոլում: Հեղինակի թվով տասնմեկ գիտական հոդվածներում տեղ են գտել ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսությունն առանձնանում է հետազոտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և հիմնավորվածությամբ: Ատենախոսությունը շարադրված է գրագետ, գիտավերլուծական բովանդակությամբ, այն հեղինակային ինքնուրույն հետազոտություն է: Ուսումնասիրելով թեմային վերաբերվող ծավալուն գրականություն՝ ատենախոսը կարողացել է համակողմանիորեն վերլուծել «խաղաղ ատոմի» զարգացման հայկական փորձը միջազգային անվտանգության գործընթացների համատեքստում:

Այնուհանդերձ, ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից, որոնցից կարելի է ներկայացնել հետևյալները.

1. Աշխատանքը զգալիորեն կշահեր, եթե ավելի խորը քննության առնվեին Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման հեռանկարները՝ հաշվի առնելով Ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված նոր աշխարհաքաղաքական և գլոբալ էներգետիկ համակարգում տեղի ունեցող փոփոխությունները:

2. Խոսելով էներգետիկ համակարգերի կայուն զարգացման դերի մասին էներգետիկ քաղաքականության ձևավորման գործում՝ նպատակահարմար կլիներ ներկայացնել այդ տեսլականի կարևորությունը ՀՀ էներգետիկ քաղաքականության մեջ, ինչը թույլ կտար նաև գնահատել ատոմային էներգետիկայի դերը Հայաստանի էներգետիկայի ոլորտի զարգացման հեռանկարային ծրագրերում:

3. 2.1 և 2.2 ենթագլուխներում ներկայացվել են Հայաստանի համագործակցային հարաբերությունները այլ միջազգային հարաբերությունների սուբյեկտների հետ ատոմային էներգիայի խաղաղ, քաղաքացիական նպատակներով օգտագործման ոլորտում: Այնուհանդերձ, ոչ բոլոր դեպքերում է ատենախոսը վերլուծել այդ համագործակցային ձևաչափերի արդյունավետությունը Հայաստանի համար:

4. 3.1 ենթագլխում ատենախոսը հպանցիկ է անդրադարձ կատարում հայկական ատոմային էներգետիկայի շուրջ ստեղծվող թշմամական և ապատեղեկատվական դիսկուրսին: Ցանկալի կլիներ առանձին ներկայացնել հիմնական ապատեղեկատվական դրույթները Հայկական ԱԷԿ-ի գործունեության վերաբերյալ: Սա հնարավորություն կտար բացահայտել հայկական «խաղաղ ատոմի» զարգացման համար խոցելի տեղեկատվական ուղղությունները միջազգային հարթակում:

5. Ատենախոսության 3.3 ենթագլխում ցանկալի կլիներ ներկայացնել նաև Հայաստան-Իրան-ԵԱՏՄ համագործակցության պոտենցիալը ատոմային էներգետիկայի ոլորտում, ինչպես կատարվել է Հնդկաստանի դեպքում:

6. Ատենախոսության մեջ առկա են մի շարք տեխնիկական բացթողումներ և անճշտություններ, մասնավորապես, օրինակ՝ 88-89 էջերում առկա է մտքի կրկնություն հայկական ատոմային էներգետիկայի հեղինակազրկման գործում Թուրքիայի և Ադրբեջանի դրդապատճառների բացատրման մասին:

Սակայն հարկ է եզրահանգել, որ նշված դիտարկումները չեն անդրադառնում Սիլվա Ռուբենի Խաչիկյանի «Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում (քաղաքագիտական վերլուծություն)» ատենախոսության գիտական արժեքայնության վրա:

Ատենախոսությունը համապատասխանում է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» (քաղաքական գիտություններ) մասնագիտությամբ գիտական աստիճանի հայցելու համար առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ - ԱՌՀԻ-ի պետ, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տ. Տ. ՔՈՉԱՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս Տիգրան Քոչարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտական քարտուղար, հ.գ.թ., դոցենտ **Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ**

02.02.2023 թ.